Ա. Ա. ՂԱԶԻՆՅԱՆ

ԱՌԱՔԵԼ ԲԱՂԻՇԵՑԻ

(Կյանքը)

Ինչպես միջնադարյան մեր շատ տաղերգուների, այնպես էլ Առաքել Բաղիշեցու մասին կենսագրական տվյալները սակավ են և կցկտուր։ Հայտնի է, որ նա ծնվել է Վասպուրականում, Բաղեշ քաղաքից հյուսիս-արևելք ընկած Պոռ գյուղում և ծննդավայրի՝ Պոռ գյուղի անունից էլ երբեմն կոչվել է նաև Պոռեցի[1]։

Առաքելը, սակայն, իր ստեղծագործությունների մեջ, որքան հայտնի է, չի գործածել այդ մականունը և իրեն բացառապես կոչում է Բաղիշեցի՝ ծննդավայրին սահմանամերձ Բաղեշ (ավելի ուշ՝ Բիթլիս) քաղաքի անունից. օրինակ՝

«Ես Առաքել նուաստ ոգի, մեղօք լցեալ Բաղիշեցի...»[2]։

Նրա տաղերից մի քանիսը, որոնք բանակապ (ակրոստիքոս) ունեն, նույնպես հոդում են Բաղիշեցի անվանաձևը։ Դրանցից է, օրինակ, «Ահա եհաս ինձ օր մահու մարմնոյս նիւթականն» սկզբնատողով տաղը, որի բանակապը հոդում է «Այս յԱռաքել վարդապետէ Բաղիշեցոյ»[3]։

Ծննդավայրից բացի, հայտնի են նաև Բաղիշեցու ծնողների անունները, հորը՝ Ներսես, մորը՝ Խութլու-մելիք։ Կ. Պոլսի առմանը նվիրված ոդբի հիշատակարանում Բաղիշեցին խնդրում է հիշել ոչ միայն իրեն՝

Այլև ծնողաց իմոց բարի Խութլու-մելիք և Ներսէսի,
Որ զառածեալս մեղաց գերի, ծնան զաւակ ողորմելի[4]։

Այս մասին կան այլ վկայություններ էլ, որոնցից կարևորը հենց իր՝ Բաղիշեցու ավանդածն է. «Աղաչեմ զընթերցողսդ յիշման արժան առնել զմեղաւք զառածեալս Առաքել։ Եւ զվարժապետն իմ քաջ նահատակն զրաբունապետն Գրիգոր։ Եւ զըստ մարմնոյ ծնաւղքն իմ զՆերսէս և զԽութլու-մելիք և զդեռաբոյս ծաղիկն Յովանէս և զհամաւրէն միարանք սուրբ անապատիս»[5],— գրել է նա 1431 թ. իր ներբողյաններից մեկի հիշատակարանում։

---

1 Ղ. Ալիշան, Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 126։

2 Նկարագրութիւն հոգևոր վարուց Յովասափու..., Վաղարշապատ, 1897, էջ 131։

3 Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 8294, էջ 125ա։ Նշենք, որ Բաղիշեցուն երբեմն շփոթել են համանուն մի ուրիշ բանաստեղծի՝ Առաքել Սյունեցու հետ, բայց շփոթությունը հիմնականում վերաբերում է ժամանակակից այդ երկու հեղինակների գործերին, մեկի ստեղծագործությունը մյուսին վերագրելուն, քան կենսագրական առանց այն էլ սակավաթիվ փաստերին։ Մատենագիտության մեջ Բաղիշեցին ենթադրաբար նույնացվել է նաև Առաքել երեց անհայտ մի տաղերգուի հետ։ Վերջինիս մասին այդ վարկածի հեղինակ Հ. Անասյանը գրում է. «Անծանոթ տաղերգու, որի անունով մի քանի հոգևոր տաղեր ենք գտնում ԺԵ—ԺԷ դարերում ընդօրինակված ձեռագիր տաղարաններում, թվում է, որ նույնն է Առաքել Բաղիշեցու հետ» (Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Երևան, 1959, հ. Ա, էջ 1155—1156)։ Այս հարցերին, սակայն, կանդրադառնանք Բաղիշեցու վերաբերյալ մատենագիտական հարցերի առընչությամբ, նկատի ունենալով, որ շփոթության խնդիրը, ինչպես ասվեց, առանձին գործերի հեղինակային պատկանելությանն է վերաբերում և ոչ թե կենսագրական տվյալներին։

4 Մատենադարան, ձեռ. 3081, էջ 102բ, 1636, էջ 210ա, 1682, էջ 89ա, 3668, էջ 154բ, 8968, էջ 124բ և այլն։

5 Արտաւազդ արք. Սիրմէեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Ծրուսաղէմի սրբոց Յակոբեանց վանքի, հ. 1, 1948, էջ 132։

Ինչպես տեսնում ենք Բաղիշեցին ունեցել է մի զավակ՝ Հովհաննես անունով, որը համաձայն մի այլ հիշատակագրության[6] եղել է ծաղկող, այսինքն՝ նկարիչ և ունեցել է նախ սարկավագի, ապա նաև քահանայի աստիճան և մահացել է երիտասարդ հասակում, 1453 թ. նա արդեն վախճանված էր և բանաստեղծ հայրը՝ Առաքելը խնդրում է իր ընթերցողներին ողորմի տալ՝

Եւ զաւակին իմ բաղձալի՝ տէր Յովհաննէս քահանայի,
Որ ի հասակ մանկագունի փոխեալ յաշխարհն կենդանի[7]։

Նշանակում է, Բաղիշեցին եղել է ամուսնացած, թեև ոչ մի հիշատակագրություն չկա կնոջ մասին և, անշուշտ, միայն կնոջ մահից հետո է, որ նա քաշվել է վանք, ստացել վարդապետական աստիճան, վարել եկեղեցական պաշտոններ և երկար տարիներ եղել միաբանության առաջնորդ[8]։ Հայտնի է, որ լինել ամուսնացած և միաժամանակ դառնալ վարդապետ, անթույլատրելի էր ըստ եկեղեցական կանոնագրության։

Բանասեր Աս. Մնացականյանը, մի առիթով, գրել է, թե ինքը Մատենադարանի ձեռագրատանը աշխատելիս հնարավորություն է ունեցել «հավաքելու մեր միջնադարյան բանաստեղծների մասին բազմաթիվ նոր ու կարևոր տեղեկություններ» և որ «պարզվում է, որ Մկրտիչ Նաղաշը եղել է Առաքել Բաղիշեցու որդին»[9]։ Բանասերը, հավանաբար, նկատի է ունեցել Նաղաշի կենսագրականի հետևյալ հատվածը. «Եւ էր սա (Մկրտիչ Նաղաշը — Ա. Ղ.) բնական ի նահանկէն Բաղիշու, ի Պոռ կոչեցեալ գեղջէն, որդի մեծատան և աստուածարեալ քահանայի Առաքելոյ և մայր բարեպաշտի։ Էին և սմա եղբարք երկու՝ Յովհաննէս քահանայ, որ տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս և միւսն՝ Արդար անուն, որ եղև երևելի, մեծ և փառաւոր և պատուեալ յամենեցունց»[10]։

Առաջին հայացքից կարծես իրավացի է բանասերը. Բաղիշեցին և Նաղաշը համագյուղացիներ են։ Առաքել է Բաղիշեցու անունը, այդ անունն է կրում և Նաղաշի հայրը։ Բաղիշեցին հոգևորական է, հոգևորական է և Նաղաշի հայրը։ Բաղիշեցին մի զավակ է ունեցել՝ անունը Հովհաննես։ Նաղաշն էլ մի եղբայր՝ այդ անունով։ Բաղիշեցու որդին քահանա է եղել և մահացել է երիտասարդ հասակում։ Երիտասարդ տարիքում է մահացել և Նաղաշի եղբայրը՝ Հովհաննես քահանան։ Հայտնի է Նաղաշի մոր անունը՝ Հոյուս-խաթուն, հայտնի չէ, դժբախտաբար, Բաղիշեցու կնոջ անունը, մի բան, որ վճռական կարող էր լինել հարցը պարզելու տեսակետից։ Այնուամենայնիվ, կարծում ենք, որ սրանք բավարար հիմք չեն տալիս Մկրտիչ Նաղաշին համարելու Բաղիշեցու որդին։ Նախ՝ երկու մեծանուն այդ բանաստեղծներից ոչ մեկը չի թողել ուղղակի հիշատակություն՝ իրենց հայր կամ որդի լինելու մասին և, երկրորդ, ոչ Բաղիշեցին և ոչ էլ ժամանակակիցներից որևէ մեկը չի հիշատակել, որ նա Հովհաննեսից բացի ուրիշ զավակ է ունեցել։ Եվ, վերջապես, կա ուղղակի հիշատակություն, որ Նաղաշի ծնողները մահացած էին գոնե 1449 թվականից առաջ, որովհետև այդ թվականին է գրվել Նաղաշի կենսագրականը։ Կենսագիրը՝ Աստվածատուր քահանան խոսելով Ամիդում Նաղաշի կառուցած կաթուղիկե եկեղեցու մասին, թվարկում է այն ընծաները, որ Նաղաշը տվել էր նորակառույց եկեղեցուն և, ի չարս դրանց, ավելացնում է. «և զայս հրաշալի Յայսմաւուրքս, որ ետ յիշատակ բարի և սուրբ Կաթողիկէն, և զՏարեգիրքն՝ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղացն իւրոց՝ Առաքել քահանային և Հոիս-խաթունին, և եղբարց իւրոց Յովհաննէս քահանային և պարոն Արդարին, Ներսէսին և Ստեփաննոսին,

---

6 Նույն տեղում, էջ 132։ «Այլև կրկին յիշեցէք զարի և քաջ բարունապետն յԱռաքէլ վարդապետն և զծնաւղսն իւր ըստ մարմնոյ զներսէսն և զխութլու-մելիքն և զորդին իւր զՈվանէս սարկաւագն, որ ծաղկեաց այլ ի գիրքս»։

7 Ձեռ. 3081, էջ 102ա, 3668, էջ 154բ, 1636, էջ 210ա, 1682, էջ 89բ, 8968, էջ 124բ և այլն։

8 1432 թ. Բաղիշեցին հիշատակված է իբրև Ջմշկածագի նահանգի Ցազման գավառի Երկայն-Ընկուզյաց վանքի միաբանության առաջնորդ։ Գրիգոր Կուզեցի գրիչը, իր ընդօրինակած մի ավետարանի հիշատակարանում, գրում է. «... աւարտեցաւ ի Ցազման գաւառի, ի նահանգին Ջմշկածակի, ի սուրբ ուխտիս Երկէն-Ընկուզեց, յառաջնորդութեամբ Առաքել վարդապետի...» (Լ. Խաչիկյան, Ժն գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 426)։

9 ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1946, № 2—3, էջ 79։

10 Լ. Խաչիկյան, Հիշատակարաններ, Ա, էջ 622—623։

որ ի Քրիստոս են հանգուցեալ. ի յիշատակութիւն հոգոց նոցա և ի վայելումն աստուածապարգև զաւակին իւրոյ տէր Մեսրոպին, որոյ տէր աստուած վայելել տացէ երկար կենդանութեան։

Մինչդեռ Բաղիշեցին կենդանի էր 1453 թ.։ Պարզ է, որ Մկրտիչ Նաղաշը չի եղել Առ. Բաղիշեցու որդին։

Այնուհետև, Բաղիշեցու մասին բանասիրության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե նա «Գրիգոր Մերենցի եղբորորդին և աշակերտն էր»[12]։

Այս կարծիքի համար հավանաբար հիմք է ծառայել Բաղիշեցու՝ Դր. Խլաթեցուն նվիրած չափածո ներբողներից մեկի մի ընդօրինակությունը, որը սկզբից ունի և՛ արձակ հիշատակարան, և՛ չափածո երեք տուն։

«Եւ ի յամի թուականիս հայոց ՊՀԴ (1425)։ Եւ եկն ի վերա երկրին արիւնակեր գազանքն՝ զորքն Օթմանին և հեծեալքն Ղոշկանին, և առ և զերի արարին զերկիրս՝ զորս և կարացին, և շատոց արիւն հեղին։ Ընդ որս և զմեծ բաբունապետն մեր և զլուսաւորիչն հոգոց և մարմնոց մերոց նահատակեցին ի վանքն Ցիպնա, յաւուր պենդէկոստէի կիրակէին, և անբուժելի կսկիծ հասուցին ամենայն երկրի. ևս առաւել մեղուցեալ անձին գծողի և խաւարեալ աչաց Յակոբի։

Որ էր ինձ հայր զովելի
Եւ պարծանաց բաբունի՝
Արեանառու մեր ազգի
Եւ հօրեղբայր գծողի»[13]։

Գծողը Հակոբն է, բաբունին՝ Գրիգոր Խլաթեցին։ Ապա ընդօրինակված է Բաղիշեցու ներբողը, որի սկզբնատառերը հոդում են «Գրիգոր վարդապետին յԱռաքելէ՝ նորին աշակերտէ»։ Հակոբի անունը հիշատակված է նաև եղերերգի երրորդ քառատողում.

Ինձ վայ եղուկ ախմար գրչի,
Յակոբ անուն՝ գծող բանի...[14]

Այս եղերերգի այն տարբերակը, որը հրատարակել են Հ. Մանանդյանը և Հր. Աճառյանը, ընդգծված տողի փոխարեն ունի՝

Յակոբ անուն՝ գրող բանի...[15]

Հենվելով այս տողի վրա, Աճառյանը եղերերգի հեղինակ է համարել Հակոբին, որը, իրոք, Գր. Խլաթեցու աշակերտն է եղել։ Սակայն նկատելով այն ակներև հակասությունը, որ այդ դեպքում առաջանում էր «Գրիգոր վարդապետին յԱռաքելէ՝ նորին աշակերտէ» բանակապի և այս տողի միջև, փորձել է լուծել հակասությունը նույնացնելով Առաքելին Հակոբի, Հակոբին՝ Հակոբ Ղրիմեցու հետ[16]։ Հետագայում մեծանուն գիտնականը ինքը վերականգնեց ճշմարտությունը[17]։ Տաղի հեղինակն է Առ. Բաղիշեցին։ Հակոբ սարկավագը Հակոբ Ղրիմեցին չէ, այլ Բաղիշեցու քարտուղարը, որի մասին հիշատակում է ինքը՝ Բաղիշեցին, Կ. Պոլսի ողբի մեջ։ Սակայն չնայած այս ուղղումներին, այնուամենայնիվ, Բաղիշեցին մնաց իբրև Գր. Խլաթեցու եղբորորդի[18]։ Իրականում, ինչպես ակներև է, Խլաթեցու ազգականը Հակոբն է։ Բաղիշեցին շատ վկայություններ է թողել իր՝ Խլաթեցուն աշակերտած լինելու մասին, սակայն ոչ մի տեղ՝ ոչ Բաղիշեցու և ոչ էլ ուրիշների կողմից վկայված փաստ չկա, որ նա եղել է նաև իր վարդապետի ազգականը։

---

11 Նույն տեղում, էջ 630։

12 Հ. Ա ն ա ս յ ա ն, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ 1106։

13 Ձեռ. 4876, էջ 519բ։

14 Նույն տեղում, էջ 519բ։

15 «Հայոց նոր վկաները», աշխատությամբ Հ. Մանանդյանի, Հր. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 275։

16 Նույն տեղում, էջ 274։

17 Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց անձ. բառ., Երևան, 1946, հ. Գ, էջ 503—504։

18 Հմմտ. Հ. Ա ն ա ս յ ա ն, Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957, էջ 80. «Առաքել Բաղիշեցու հորեղբայր և ուսուցիչ Գրիգոր Մերենցը» և այլն։

Ցարդ հայտնի չէ Առ. Բաղիշեցու ծննդյան թվականը։ Բանասիրության ու պատմագրության մեջ, հենվելով նրա թվակիր առանձին ստեղծագործությունների և առանձին փաստերի վրա, Բաղիշեցուն, իրավամբ, համարել են ԺԴ—ԺԵ դարերի հեղինակ, առանց, սակայն, փորձ անելու որոշել նրա ծննդյան գոնե մերձավոր տարեթիվը։

Ժամանակագրական, առայժմ հաստատուն կովան չկա նրա ծննդյան ճիշտ կամ առավել ճշմարտամերձ թվականը որոշելու համար։ Հիշատակարանները ոչինչ չեն ասում այդ մասին, նրա ստեղծագործություններում եղած ակնարկներն էլ բավարար հիմքեր չեն տալիս։ Այսպես, օրինակ. Բաղիշեցին իր գործերից մեկում ունի այսպիսի ակնարկ. խոսելով Ներսես Պարթևին վերագրված դուշակությունների մասին, իբրև դրանց անխուսափելի կատարման փաստ նշում է նաև այն, թե.

Ասաց գալ թաթարին, որ կատարեցաւ,
Եւ աղգին նետողաց, որ երևեցաւ,
Եւ չաղաթայ ազգին, որ աչք մեր տեսաւ,
Անուն գլխաւորին Թամուր կոչեցաւ[19]։

Այստեղ ակներև է մի բան. Բաղիշեցին ականատես է եղել Թամուրյան արշավանքների սարսափներին։ Լանկ-Թամուրը երեք անգամ ասպատակել է Հայաստանը՝ առաջին անգամ 1386, վերջին անգամ 1400 թվականներին։ Շուրջ 15 տարի տևած այդ արշավանքներից որի մասին է Բաղիշեցու խոսքը, որոշակի չէ։ Այնուհանդերձ, այս փաստն արժանի է ուշադրության. Բաղիշեցին գոնե մանկական հասակում պիտի լիներ՝ իրեն իբրև ականատես վկայակոչելու համար։

Թեև ստույգ տեղեկություններ չկան Բաղիշեցու սկզբնական կրթության մասին, ուր կամ քանի տարեկանից է սկսել սովորել, հայտնի է սակայն, որ նա երկար տարիներ աշակերտել է ժամանակի մեծահամբավ վարդապետներից մեկին՝ Գրիգոր Խլաթեցուն (1349—1425), մականվամբ Մերենց, հոր՝ Մերի անունից։ Խլաթեցին Տաթևի հռչակավոր համալսարանի սաներից էր, աշակերտել էր Հովհան Որոտնեցուն՝ լինելով Գրիգոր Տաթևացու ուսումնակիցը։ Որոտնեցու մահից (1386 թ.) հետո, Խլաթեցին վերադառնում է Քաջբերունիք՝ «ի բնիկ գաւառն իւր», մտնում Արճեշ քաղաքի մոտ գտնվող Սուխարա վանքը «առ մեծ վարժապետն Սարգիս» և «անդ վարժեալ ու բաղում աշխատութեամբ դեգերեալ ընկերակից իւր ունենալով զմեծ ճգնաւոր վարդապետն Վարդան Հոգեաց Վանացն»[20], տասս տարի անց ստանում է վարդապետական աստիճան։ Սարգիս Սորբեցու մահից (հավանաբար 1401—1402 թթ.) հետո Սուխարա վանքի առաջնորդ է դառնում Վարդան վարդապետը, որը խռովահույզ ժամանակի փորձանքներից հարկադրված փախչում է Տոսպ՝ Սալնապատ վանքը, ուր և վախճանվում է 1406 թ.։ Սուխարա վանքում Վարդան վարդապետին հաջորդում է Խլաթեցին և, իր նախորդների նման, ինքն էլ ստիպված հեռանում է վանքից, վերադառնալով իր առաջին ուսումնատեղին՝ Արծկե քաղաքի Դաստակ կամ Ցիպնա վանքը, ուր և մնում է մինչև իր եղերական մահը՝ 1425 թ։

Բաղիշեցին բազմիցս հիշատակել է, որ ինքն աշակերտել է Խլաթեցուն, ջերմ սիրով ու խորին ակնածանքով է խոսում նրա մասին, սակայն, առանց երբեք որոշակի ասելու, թե երբվանից է սկսել ուսանել նրա մոտ, որտեղ և որքան ժամանակ։ Հավանական է, սակայն, որ Բաղիշեցին Խլաթեցուն աշակերտած լինի նախ Սուխարա, ապա նաև Ցիպնա վանքերում այն ժամանակ, երբ Խլաթեցին դարձավ այդ վանքերի առաջնորդը և երբ «ժողովեցան առ նա բազումք ի կրօնաւորաց և յուսումնասէր եղբարց»[21]։

Ղ. Ալիշանը, ըստ իր սովորության, առանց աղբյուրը հիշատակելու, Առ. Բաղիշեցու հետ Թովմա Մեծոփեցուն ևս համարում է Խլաթեցու աշակերտ[22]։ Մեծոփեցին, իրոք, սովորել է Սուխարա վանքում և ուսման այդ շրջանը, ըստ Գար. Հովսեփյանի՝ վերջացել է 1406 թ. Վարդան վար-

---

19 Մատենադարան, ձեռ. 2398, էջ 100ա, 3081, էջ 240բ, 4287, էջ 68բ։

20 «Հայոց նոր վկաները», Վաղարշապատ, 1903, էջ 265։

21 Նույն տեղում, էջ 266։

22 Ղ. Ա լ ի շ ա ն, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 123։ «Չորեքտասաներորդ գարուն վերջերն և յառաջին քառորդ ԺԵ-ին, շատ հռչակված էր Գր. Խլաթեցին վասն գիտութեան և սրբակեաց վարուցն և նահատակութեան յամին 1425 զոր զբստ յայլոց յիշեն գովութեամբ իրեն աշակերտեալքն՝ Մեծոփեցին Թովմաս և Առաքել Բաղիշեցի յետինս՝ նաև ոտանաւոր բանիւ»։

դապետի մահվամբ և տեսել է 12 տարի[23], Վարդանի աշակերտներից 12 հոգի, այդ թվում և Թովման, դնում են Տաթև՝ Գրիգոր Տաթևացու մոտ ուսանելու։ Բաղիշեցու անունը չկա դրանց մեջ[24]։

Այիշանի նշած փաստը հետաքրքիր է այն առումով, որ եթե Բաղիշեցին և Մեծոփեցին սովորել են Գրիգոր Խլաթեցու մոտ, ապա անհավանական չէ, որ նրանք լինեին թերևս սերնդակիցներ՝ տարիքային ոչ մեծ տարբերությամբ և որ Վարդան վարդապետի մահից հետո Բաղիշեցին, որ առանձին մտերմությամբ էր կապված Խլաթեցուն, մնար նրա մոտ՝ ուսումը շարունակելու։ Գար. Հովսեփյանի հաշվումներով Մեծոփեցին պետք է ծնված լինի 1376—1379 թթ.[25], կարծում ենք, Բաղիշեցու ծննդյան թվականը ևս պետք է դնել 1380-ական թվականներին և ահա թե ինչու։ Ասացինք, որ նա ակնարկում է այն մասին, թե ինքը տեսել է Լանկ-Թամուրի արշավանքները։ Անկասկած է, որ ծնված լինելով այդ թվականներին, Բաղիշեցու, եթե ոչ պատանեկան, գոնե մանկական հիշողությունները կապված կլինեին այդպիսի նշանավոր անցքերի հետ։ Այնուհետև, եկատի ունենակով այն ժամանակվա ուսման երկարատևությունը, Բաղիշեցին 1406 թ. հետո էլ կարող էր աշակերտել Գրիգոր Խլաթեցուն՝ լինելով շուրջ 20—25 տարեկան։ Կա մի կարևոր հանգամանք ևս, դա Բաղիշեցու ամուսնացած լինելու հարցն է։ Թե երբ է Բաղիշեցին վարդապետական աստիճան ստացել, ստույգ հայտնի չէ։ Հայտնի է սակայն, որ նա 1422 թվականին արդեն վարդապետ է[26]։ Ինչպես ասվեց, Բաղիշեցին ունեցել է մի զավակ՝ Հովհաննես անունով։

Հովհաննեսի մասին առաջին անգամ հիշատակում է ինքը՝ Բաղիշեցին. «Յարմարեցաւ ճառ ծննդեան և յայտնութեան Քրիստոսի աստուծոյ մերոյ և զովեստ տիրամայր աստուածածնին՝ ի բազմամեղ Առաքել պիտականուն վարդապետէ՝ ի նորաշէն անապատիս, որ յանուն սրբուհոյ Աստուածածնին և Յովհաննու Կարապետին ի թուականիս հայոց ՊՁ (1431)։ Աղաչեմ զընթերցողսդ յիշման արժան առնել զմեղաւք զառաձեալս Առաքել։ Եւ զվարժապետն իմ՝ զքաջ նահատակն, զրաբունապետն Գրիգոր։ Եւ զըստ մարմնոյ ծնաւղքն իմ՝ զներսէս և զխութլու-մելիք և զեռաբոյս ծաղիկն Յովհանէս և զհամաւրէն միաբանք սուրբ անապատիս»[27]։ Հիշատակված թվականին դեռաբույս ծաղիկ Հովհաննեսը ավելի չէր կարող լինել, քան պատանի։ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի թիվ 25 ձեռագիր Հայսմավուրքը, որն ընդօրինակել են երեք գրիչ՝ Մինաս դպիրը, Գեորգ երեցը և Կարապետ երեց Վանեցին, ավարտվել է 1435 թ. հավանաբար սկսված լինելով դրանից մի քանի տարի առաջ[28]։ Մինաս դպիրը, առանց թվականը նշելու, ունի այսպիսի հիշատակագրություն. «...Որոյ ազաւթիւքն՝ ողորմի ստացողի զրոցս Առաքել վարդապետին և ծնաւղաց նորին Ներսէսին և Խութլու-մելիքին և դեռաբոյս մանկանն տէր Յովհանէսին, ծաղիկ պայծառ ի յոտս խաչին և ինձ՝ մեղապարտ գրչի Մինասի ...»[29]։

Այստեղ արդեն հիշատակված է նաև Հովհաննեսի եկեղեցական կոչումը, որն, ինչպես երևում է նույն ձեռագրի մի այլ հիշատակարանից, սարկավագի աստիճան է։ «Այլև կրկին յիշեցէք զարդ և քաջ բաբունապետն զԱռաքել վարդապետն և զծնաւղսն իւր ըստ մարմնոյ, զներսէսն և զխութլու-մելիքն և զորդին իւր զՈվանէս սարկաւագն որ և ծաղկեաց այլ ի գիրքս»[30]։ Բաղիշեցու Հովհաննես սարկավագ որդին, պետք է կարծել, որ 1435 թ. կլիներ 20—25 տարեկան, այսինքն՝

---

23 Գ ա ր. Հ ո վ ս ե փ յ ա ն, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914, էջ Ե։

24 Նույն տեղում, էջ Ը։

25 Նույն տեղում, էջ Դ։

26 Ձեռ. 7377, էջ 408բ. «Յարմարեցաւ ճառս ի վանքս Ղազարու, ձեռամբ ամենամեղ և եղկելի թշուառական անձին յԱռաքել վարդապետի, ի թուականիս հայոց ՊՀԱ (1422)» գրել է Բաղիշեցին իր ներբողյաններից մեկի հիշատակարանում։

27 Ա. Մ յ ո ւ ր մ ե ա ն, Մայր ցուցակ հայ ձեռ. Երուսաղեմի... 1948, հ. 1-ին, էջ 132։

28 Ըստ Մյուրմեյանի նկարագրության՝ ա. գրիչ՝ Մինաս դպիր (1—313 էջ). բ. գրիչ՝ Գեորգ երէց և վերջին գրիչ Կարապետ երէց Վանեցի. ծաղկող՝ Յովհաննէս սարկաւագ, ստացող՝ Պարոն Արեշահ. ժամանակ՝ ՊՀԱ (1422). տեղի՝ Երկայն Ընկուզեաց վանք՝ յԱրղնի». Մ յ ո ւ ր մ ե ա ն, նշվ. աշխ., էջ 129)։ Բերված հիշատակարաններից, սակայն, չի երևում, որ այն գրվել կամ սկսվել է գրվել 1422 թվականից։ Որոշակի է ավարտման տարեթիվը. «...Արդ՝ ես... երէց Կարապետ, ըստ իմում տկար անձամբս, յանձն առի և... կատարեցի... ի վանքս Երկայն Ընկուզեաց... ի թուականիս հայոց ՊՁԴ (1435)։ (Մ յ ո ւ ր մ ե ա ն, նշվ. աշխ., էջ 131)։

29 Ա. Մ յ ո ւ ր մ ե ա ն, նշվ. աշխ., էջ 131։

30 Նույն տեղում, էջ 132։

ծնված շուրջ 1410—1415 թվականներին։ 1380-ական թվականներին ծնված Առ. Բաղիշեցին, անշուշտ, կարող էր այդ թվականներին ծնված զավակ ունենալ։

Այսպիսով, չնայած ուղղակի փաստերի բացակայությանը, եղած տեղեկությունների համադրմամբ, կարծում ենք, հավանական պետք է համարել Բաղիշեցու՝ 1380-ական թվականներին ծնված լինելու վարկածը։

Բաղիշեցին արդեն իբրև վարդապետ մի ժամանակ ապրել և գործել է Տարոնի Առաքելոց կամ սուրբ Ղազարի վանքում. 1422 թ. այստեղ նա գրել է «Մեծի գալստեան Մաղկազարդիս» ներբողյանը[31]։ Անհավանական չէ, որ նա որոշ ժամանակ եղած լինի նաև Սուխարա և Ցիպնա վանքերում՝ իր վարդապետ Գր. Խլաթեցու մոտ։ Որոշակի է, որ 1431 թ. Բաղիշեցին արդեն Զմշկածագի նահանգի Ցազման գավառի Երկայն-Ընկուզյաց կամ Սուրբ Հովհաննես Կարապետի վանքում էր, ինչպես վկայված է նրա ներբողյաններից մեկի հիշատակարանում[32], իսկ ըստ մի այլ հիշատակարանի՝ այդ վանքի առաջնորդն էր[33]։ Իբրև այդ վանքի առաջնորդ նա հիշատակված է 1434 թ. Դավիթ կրոնավորի[34], 1435 թ. և Կարապետ Վանեցու, և ուրիշների կողմից[35]։ Բաղիշեցին եղել է գործունյա առաջնորդ, շինարարական աշխատանքներ է ծավալել, բարեկարգել իր ղեկավարած վանական միաբանությունը։ Նա, ինչպես գրում է Հ. Ոսկյանը, շինարար առաջնորդ էր, «Վանքը կընդարձակե նորանոր շինարարություններով և հավելվածներով»[36], նոր աստիճանի է բարձրանում միաբանների գործունեությունը, առավելապես արդյունավետ դարձնելով նրանց գրչագրական աշխատանքները։ Այստեղ ընդօրինակված մի քանի ձեռագրեր հասել են նաև մեզ[37]։ Բաղիշեցին միաժամանակ շարունակում է իր գրական-ստեղծագործական աշխատանքները։ Հավաստիորեն այստեղ են գրվել նրա մի քանի ներբողները, աստվածածնին նվիրված երկու քերթվածները, հավանաբար այստեղ է 1434 թ. նա տաղաչափել իր ծավալուն գործերից մեկը՝ «Տաղ Յովասափու» պոեմը։ 1438 թ. Բաղիշեցին Մերդին քաղաքի մոտ, ինչպես ինքն է ասում «յեզր Մերտին մեծ քաղաքին», գրում է Վառվառե կույսին նվիրված գանձը[38]։ 1445 թ. Բաղիշեցին և պարոն Արևշահը Աբրահամ եպիսկոպոս Մսրցու միջոցով, Արղնիի Հովհաննես եպիսկոպոսի վկայությամբ, Երուսաղեմի Սուրբ Հակոբ կաթուղիկե վանքին են նվիրում մի Հայսմավուրք՝ գրված Երկայն-Ընկուզյաց վանքում, ավարտված 1435 թ.։ Սա Այուրմեյանի նկարագրած և մեր կողմից արդեն բազմից հիշատակված Երուսաղեմի սուրբ Հակոբյանց վանքի թիվ 25 ձեռագիրն է։

Նվիրաբերության այս փաստից առանձնապես ուշագրավ է Աբրահամ եպիսկոպոսի հետևյալ հիշատակագրությունը. «Ես նուաստ ոգիս տէր Աբրահամ Երուսաղեմայ եպիսկոպոս, որ ճանդիպեցայ ի Արղնին և երեթ նուէրք սուրբ Յակոբայ Երուսաղեմայ եկեղեցւոյն զգիրքս զայս և շուրջառ այլ պարոն Արևշահ՝ յիշատակ իւր և ծնողաց իւրոց...։ Գրեցաւ ի մեծ թուին Հայոց մեծաց ՊՂԴ

---

31 Ձեռ. № 7375, էջ 396ա։ Տե՛ս նաև՝ Հ. Ոսկյան, Տարօն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, 1953, էջ 63։

32 Ա. Այուրմեյան, էջ 132։

33 «... Աւարտեցաւ,— գրել է Գրիգոր Կուզեցին իր ընդօրինակած ավետարանի հիշատակարանում՝ 1432 թ.,— ի Ցազման գաւառի, ի նահանգին Զմշկածակի, ի սուրբ ուխտիս Երկէն-Ընկուզեց, յառաջնորդութեամբ Առաքէլ վարդապետի»։ (Լ. Խաչիկյան. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ա, էջ 426)։

34 «...Արդ, ես՝ Դաւիթս, որ գրեցի, զաւետարանս տեառն Յիսուսի.
Զեմ արժանի այս սուրբ կարդի, զի կորուսի զփառս հայրենի,
Բայց գրեցաւ սա յանապատի, որ Ընկուզեաց անուն կոչի,
Ի դրունս Սուրբ Աստուածածնի և Մկրտչին տեառն Յիսուսի,
Ի գաւառիս Յերապալսի, որ Զմշկածաղ այժմ կոչի,
Ձեռամբ Դաւիթ կրաւնաւորի, որ եմ դերեալ սատանայի։
Արդ, դաւաչնորդ սրբոյ ուխտիս, ըզԱռաքել վարդապետիս,
Տացէ Յիսուս պարգևս բարիս, միաբանիցս առ տէրունիս»։
(Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Յուցակ հայ. ձեռ. Թաւրիզի, Վիեննա, 1910, էջ 12)։

35 Ա. Այուրմեյան, էջ 130—132։

36 «Հանդէս ամսօրեայ», 1960, № 7—9, էջ 371։

37 Մատենադարան, ձեռ. № 4206, Երուսաղեմի սուրբ Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. թիվ 25 և 1957։

38 Ձեռ. 424, էջ 278ա։

(1445) մարտ ամսոյ ԻԳ (23) ի փառս աստուծոյ հաւր, ամէն, յաւուր աւագ շաբաթու երեքշաբթի աւրն, ի Դամասկոս քաղաքս»[39]։

Այս հիշատակարանին անդրադառնալուց առաջ, սակայն, ասենք, որ Բաղիշեցու մասին վերջին ստուգ տեղեկությունը վերաբերում է արդեն 1453 թ., երբ նա, լսելով Կոստանդնուպոլսի ողբերգական անկման լուրը, գրում է իր հայտնի Ողբը՝ Բյուզանդական կայսրության այդ վերջին պատվարի խորտակման ցնցող զույժի ազդեցության տակ։

Աբրահամ եպիսկոպոսի հիշատակագրությունից առանձնապես կարևոր է «Հանդիպեցայ ի Արղնին» արտահայտությունը։ Նվիրատուների մեջ էր, ինչպես կտեսնենք ստորև բերված հիշատակարանից, և Բաղիշեցին։ Արդյոք Արղնիում չէ, որ Աբրահամ եպիսկոպոսը հանդիպել է Բաղիշեցու թվարկած անձանց՝ Արղնիի Հովհաննես եպիսկոպոսին, պարոն Արևշահին, և, իհարկե, նաև իրեն՝ Բաղիշեցուն։ Կարծում ենք, այդպես պետք է հասկանալ «հանդիպեցայ ի Արղնին» արտահայտությունը, ըստ Բաղիշեցու հետևյալ հիշատակագրության. «Ես՝ Առաքել վարդապետս և պարոն Արևշահ Խաչզադամաղայս տուաք զգիրքս զայս ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի գուռն Սուրբ Յակոբ կաթուղիկէի, յիշատակ մեզ և ծնողաց մերոց և ամենայն արեան մերձաւորաց, ձեռամբ և վկայութեամբ տէր Աբրահամ եպիսկոպոսի Երուսաղէմի և վկայութեամբ տէր Յովհաննէս եպիսկոպոսի Արղնու...»[40]։ Բաղիշեցու՝ Արղնիին կապված լինելու այս հանգամանքը հնարավորություն է տալիս որոշելու նրա մահվան թերևս ստույգ տարին, ամիսն ու օրը, ինչպես նաև՝ վայրը։

Երուսաղեմի հայերեն ձեռագրերի մատենադարանի № 1198 ձեռագրի (ընդօրինակել է Դավիթ երեցը 1452 թ. Մերգին քաղաքում), ընդօրինակության սկզբնօրինակը, ըստ հիշատակարանի, Դավիթը վերցրել է Առաքել վարդապետից. «Զաւրինակ տաւղ զԱռաքել վարդապետն յիշեցէք ի տէր և զանպիտան կրիչս զԴաւիթ երէց»[41]։ Ո՞ր Առաքելի մասին է այստեղ խոսքը, պարզ չէ։ Եվ ահա նույն հիշատակարանին Դավիթ երեցը կցել է մի տարեգրություն՝ կազմված իր կողմից, որը ներառում է մոտ ութ տարվա՝ 1450—1457 թթ. անցուդարձերը, որտեղ և կա այսպիսի հիշատակագրություն. «Յամին ՋԳ (1454)-ի յունվար ԺԱ (11), յաւուր շաբաթու, վախճանեցաւ Առաքել վարդապետն յԱրղնի»[42]։ Տանոթագրության մեջ պատմաբան Վ. Հակոբյանը կարծում է, որ հիշված անձնավորությունը նույն «Առաքել վարդապետն է, որն ընդօրինակելու համար Դավիթ Մերգինցուն 1452 թ. տրամադրել էր իր ձեռագիրը»[43]։ Սա հավանական է։ Հավանական է նաև այն, որ Արղնիում վախճանված Առաքել վարդապետը լինի Առ. Բաղիշեցին։ Այսպես ենք կարծում, նախ, ելնելով այն բանից, որ, ինչպես ասվեց, Բաղիշեցու մասին վերջին ստույգ տեղեկությունը վերաբերում է 1453 թ.։ Այնուհետև, ինչպես տեսանք, Բաղիշեցին առաջ էլ, օրինակ, 1445 թ. եղել էր Արղնիում, 1454 թ. նույնպես կարող էր լինել այնտեղ, մանավանդ, որ Արղնին, բացի վանական կենտրոն լինելուց, հայտնի էր նաև իբրև «ամուր դղեակ», ուր վտանգի դեպքում ապաստանում էին շրջակա բնակիչները[44], իսկ այդ տարիներին, իսկապես, վտանգված էր խաղաղությունը։ Այնուհետև, Արղնին հեռու չէր Երկայն-Ընկուզյաց վանքից, որի առաջնորդն էր Բաղիշեցին։ Ավելացնենք նաև, որ Արղնիում հաճախ էր լինում նաև Մկրտիչ Նաղաշը, որը մի ժամանակ էլ վանքի առաջնորդն էր և որը եկեղեցական բարձրաստիճան պաշտոնյա լինելուց բացի, հայտնի բանաստեղծ էր և Առ. Բաղիշեցու հայրենակիցը։ Մկրտիչ Նաղաշը և Առ. Բաղիշեցին, անշուշտ, ճանաչել են իրար ոչ միայն իբրև հայրենակիցներ, այլև իբրև նույն ժամանակաշրջանի գրական-եկեղեցական գործիչներ։ Այդ է վկայում, օրինակ, Նաղաշի 1449 թ. գրած մի հիշատակագրության հետևյալ հատվածը. «Ապա յետոյ եկն եհաս և հանգիպեցաւ առ մեզ ի յԱմիթ մայրաքաղաք ճգնաղգեաց սուրբ կրաւնաւորն Յովսէփ, ձեռնասուն աշակերտն սուրբ և

39 Ա. Սյուրմելյան, էջ 132—133։

40 Ա. Սյուրմելյան, էջ 132։

41 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Երևան, 1956, հ. 2, էջ 211։

42 Նույն տեղում, էջ 214։

43 Հմմտ. Գ. Սրուանձտեանց, Թորոս աղբար, Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 380—381։

44 «... Գրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս ՊՁՁ (1437), ձեռամբ Մխիթար աբեղայի... ի հայրապետութեան տէր Մկրտչին՝ վերագիտող յամուրն Արղնի բարձր Աստուածածնին և Ամիթ շահաստան քաղաքի» (Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայ. ձեռ. հիշատ., Ա, էջ 471)։ Կամ՝ 1444 թ. գրված մի այլ հիշատակարանից. «...Աւարտեցաւ սուրբ աւետարանս ի յամուր դղեակս յԱրղնի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս..., ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս և յեպիսկոպոսութեան տէր Մկրտիչ արքեպիսկոպոսին, և յերեսփոխանութեան նորին՝ Յոհանէս կրօնաւորին, ի դառն և ի նեղ ժամանակիս» (Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 576)։

աստուածաբան վարդապետին Առաքելի»[45], Որ Հովսեփ կրոնավորի վարդապետը Առաքել Բաղիշեցին է, երևում է Բաղիշեցու մասին պահպանված մի այլ, դժբախտաբար, թերի հիշատակարանից. «...և զհոգևոր որդին զՅովսէփ մեղաւորն և զկարդա(ցողսդ)»[46], Կամ՝ նույն ձեռագրի այլ հիշատակարանից. «... Եւ առաջնորդ սուրբ ուխտիս Առաքել վարդապետին և դեռաբույս ծաղկին Յովհաննէսին և Յովսէփ կրօնաւորին և համօրէն միաբանացս...»[47].

Չնայած ուղղակի փաստերի բացակայությանը, ելնելով կողմնակի այս առնչությունների ամբողջությունից, կարծում ենք, որ Առաքել Բաղիշեցին, ինչպես ասվեց, վախճանվել է 1454 թ. հունվարի 11-ին, Դիարբեքիրից հյուսիս-արևմուտք ընկած Արղնի կամ Արկնի փոքրիկ քաղաքում.

А. А. КАЗИНЯН

АРАКЕЛ БАГИШЕЦИ

Резюме

Биографические сведения об Аракеле Багишеци, как и о многих других армянских средневековых поэтах, скудны и отрывочны.

В статье впервые на основании некоторых нововыявленных рукописных данных показано:

1. Багишеци родился в Васпуракане, в селе Пор, расположенном северо-восточнее города Багеша (позднее Битлис), поэтому по имени родного села и назывался иногда Порецц. Однако поэт больше известен под именем Багишеци, что засвидетельствованно в его произведениях.

2. Родителей поэта звали: отца—Нерсес, мать—Хутлу-мелик. Аракел был учеником одного из наиболее образованных людей того времени—Григора Церенца Хлатеци (1349—1425). Багишеци имел сына по имени Ованес, который, будучи уже художником и священником, скончался в молодости.

3. Приблизительная и вероятная дата рождения поэта—1380-е годы; датой же смерти, по всей вероятности, является—1454 г. На основании сообщаемых в его творчестве данных нами определены некоторые вехи жизни и деятельности поэта.

---

45 Լ. Խաչիկյան, ԺԵ դարի Հայ. ձեռ. հիշատ., Ա, էջ 632։

46 Ա. Սյուրմելյան, էջ 132։

47 Նույն տեղում։